# Տոնածառ շղարշից



Միասին պատրաստենք նուրբ ու շքեղ տոնածառ շղարշից։

Անհրաժեշտ են. շղարշ (tulle), շշի կափարիչ, երկար փայտիկ, մկրատ, թել-ասեղ, կանաչ ժապավեն, գունավոր ժապավեն, հուլունքներ և սիլիկոնե սոսնձի ատրճանակ։



Շղարշից կտրում ենք տարբեր լայնության և մոտ 1մ երկարության երիզներ.



Զգուշորեն ծակում ենք շշի կափարիչը և մեջը խրում փայտե ձողիկը (կամ ձողիկները, եթե անցքը մեծ է ստացել և փայտե ձողիկն ամուր կանգնած չէ.






Որպեսզի փայտի գույնը չերևա, այն փաթաթում ենք կանաչ երիզով.





Այժմ վերցնում ենք շղարշի ամենալայն երիզը և նրա մի ծայրը կարում (բլանդում)։



Վերջում թելը ձգում և կապում ենք: Ստանում ենք «կիսաշրջազգեստ».



Այդպես բոլոր երիզներից պատրաստում ենք «կիսաշրջազգեստներ» և դրանք հագցնում փայտիկի վրա.









Եղևնու գագաթին կարմիր ժապավենակապ ենք ամրացնում.



Սիլիկոնե սոսնձի օգնությամբ հուլունքներ ամրացնելով եղևնու վրա, ստանում ենք գեղեցիկ տոնածառ՝





Նմանատիպ տոնածառ կարելի է պատրաստել նաև սպիտակ և այլ գույների շղարշից։